

ՏՅՈՒՆՆԵՐ - ԻՄՊՐԱԿՏԱՐԱՆ

7. ՄԱՍՈՒՐԵԱՆ
ԲԱԺՍՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ
ՅԱՐԵԱՆ 500 ՂՐԵ.
ՆԵՍԱՍՏԵԱՑ 250
ԵՐԱՍՏԵԱՑ 150

Բաժանորդագրութիւնը կ'սկսին
ամեն ամսոյ 1 ինչ 15 ինչ

100 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Fondateur

M. Mamourian

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVELIAN MAMOUL,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ



ԵՐԱԶԱՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Չիզակո հրատարակուած կուսակցական թերթ մըն է որ իր հնաւանդ սո. վորութեան համեմատ սկսած է երազատեսութիւններու:

Մուրացկանութիւն կ'անուանէ հայկական դատի յաջողութեան համար օտար միջամտութեանց եղած դիմումներն և մանուկ գիւանագէտներ կ'անուանէ մեր Բարեգի պատուիրակութիւններն, որոնք օտարներու զոհներն ափ առած անոնցմէ օժանդակութիւն կ'ընդունին ի պաշտպանութիւն մեր դատին:

Եւ կ'աւաջարկէ որ Հայերն իրենց իսկական ոյժերով տիրանան իրենց հայրենիքին, որմէ յետոյ մրցակցութիւն մը պիտի սկսի եղեր օտար պետութեանց միջև օգնելու Հայոց և անոնց հայթայթելու հարկ եղած նիւթական բոլոր պիտոյքներն, ուղղամթերք, դրամ և շնչ:

Եւ դարձեւ ի վեր անբացատրելի առհաւուրեամբ մը միշտ օտարէն ակնկալութիւններ տածած ըլլալուն համար Հայ ժողովուրդն ցայսօր չէ յաջողոր տիրանալ իր հայրենիքին:

Արդեօք լրջօրէն կ'իտոսի՞ որ կ'հաւատայ ռեբիտասարգ Հայաստանի խրմբազրպետն իր ըսածներուն:

Իր կուսակցութիւնն ծնունդ առած օրէն այս նպատակին կ'հետապնդէ եւ դեր և պահպանողական կուսակցութիւնն եղեր է պատճառ այդ նպատակի վիժումին, որ այսօր դարձեալ կարելի կ'համարի հետապնդել ու իրագործել հարիւր հազար հայկական զինուորներով...:

Երազատեսութիւնն թէ զգայախարութիւն չենք կրնար որոշել:
Հետաքրքրական է գիտնալ թէ՛ այդ տեսակ անիրականալի խնդիրներու շուրջ յամեցողներ զեռ ունի՞նք մեր մէջ, անոնց հաւատացողներ ալ կը զանաւորն:

Գտնուին կամ ոչ, ցաւալի է որ այսօրինակ խնդիրներ յուզելու կ'ընեն մեր կարգ մը հրատարակագիրներն և այնպիսիներ, որոնցմէ աւելի լլ ընթերցում և աւելի խոհեմութիւն կ'ակնկալուի և մանաւանդ իրենց երկար ասպարէզին մէջ գէթ սակաւ փորձառութիւն:

Եթէ այդքան զիւրիւն բան էր Հայոց համար իրենց հայրենիքին տէր դառնալ, առանց օտարին անպակասութեան, ինչու համար երբ ռուսական բանակներն սկսան ամեն բան թողուլ ու մեկնել թրքական սահմանազուլներէն ալ անդին, Հայերն բանաձգեցան թուրք ըլլալ և կուրծք տալ երբ իրենց տրամադրութեան կ'ընդունին թնդանօթ, ուղղամթերք, հազուատ և պարէն, ուր էին այդ հարիւր հազար զինուորներն, որովհետեւ միակ է բացարիկ պարագան էր որ կ'ներկայանար մեզի համար:

Չըրինք, որովհետեւ չէինք կրնար, այլ կարելին ըրաւ հայ բանակը, զրազնցելու համար թուրք յառաջացող բանակը, որ վերջ ի վերջոյ գիտնեք թէ՛ Անդրկովկասի մինչև ո՞ր տեղերն կրցաւ յառաջանալ ի չզոյէ դիմադրող ոյժերու, երբ մանաւանդ Վրացիք, անոնց առջև գիւրացուցին ամեն բան և ներքէն առին բերդը, բառնալով թուրքերու առջև ամեն արգելք ու խոչընդոտ թողուց պահ մը այդ թուականն և անցնինք Համիտեան շրջանին:

Հայ յեղափոխական կուսակցութիւններն, եթէ չենք սխալիր, այդ շրջաններուն մէջ կարելի ամեն բան ըրին, միշտ ուշադրութիւնը հրահարելու համար Եւրոպական պետութեանց, որպէսզի անոնց անպակասութեամբ կարելի ըլլար Հայկական գաւառներու մէջ բարենորոգումներ ներմուծելու Եւրոպական հակակշոր տակ:

Անկախութեան պարագան հեռաւոր նպատակ մըն էր որու հետապնդումին չձեռնարկեցին, որքան որ գիտնեք, հայ յեղափոխական մարմիններն:

Հետեւաբար հակասութեան մէջ կ'մտնէ յօդուածագիրն, երբ կ'ինքզայրէ հայ ժողովուրդն, որ չմասնակցեցաւ իրենց և միշտ օտարէն սպասեց ամեն բան, բաց չէ՞ որ նոյնիսկ իրենք, այդ օտարին ուշադրութիւնն և ըստ կարգի օժանդակութիւնն ունենալու համար ի գործ դրին ամեն տեսակ յեղափոխական շարժումներ:

Նոյն իսկ եթէ Հայ ժողովուրդն ուզէր ընդհանուր ասպատակութեան մը մասնակցել, ինչ կերպով կրնայ ընել այդ բանն երբ իր տրամադրութեան տակ ոչ զենք ունէր, ոչ ուղղամթերք և ոչ ալ զինուորական տարրական ծանօթութիւն մը:

Հնչակեան կուսակցութիւնն չէ՞ որ կ'ազմակերպեց Չէյթունի ասպատակութիւնն, ինչու չկրցաւ այդ շարժումն արդիւնաբեր դարձնել, ի՞նչ շահեցաւ և ինչո՞ւ ամենէ վերջ օտար միջամտութեան դիմել պարտաւորուեցաւ, քանի որ առհաւուրեամբ մը, դարաւոր ցաւազարութիւնն մըն էր օտարի դիմելու այդ հայկական ունակութիւնը:

Սասունի ասպատակութիւնը, Վոլոյ պանքաի գէպը, միթէ Եւրոպայի ուշադրութիւնն գէպի հայկական դատն դարձնելու համար կ'ազմակերպուած ցոյցեր չէին, եթէ այդ չէր անոնց նպատակն, միթէ քանի մը հարիւր հողաբաւոր հայեր շարժել տալու նպատակով ի գործ դրուեցան անոնք:

Աւելի ծանրանալ չենք ուզեր այս մասին, ցաւալի է միայն որ յեղափոխական գործի մէջ այսքան տարիներ զործօն կեանք ունենալ կարծուող Սպարակիւնեան մը այսպէս կ'հակասէ իր գործին և պարզապէս ժողովուրդին աչքին փոշի ցանելու քաղաքականութեան կ'գիմէ այս տեսակ երազատեսութիւններով՝ պղտորելու շանալով ժողովրդային միամիտ դասակարգը:

Ինչպէս անցեալին նմանապէս և ներկայիս մէջ մեր հայրենիքին և մեր դարաւոր արդար իրաւունքին տիրանալու համար, մենք մեր միջոցներով բան

մը չենք կրնար ընել, եթէ Համաձայնական պետութիւններն մեզի չնուիրեն իրենց նիւթական և բարոյական աջակցութիւնը, այս պարագան լաւ կ'ըմբռնեն հայ ժողովուրդն և հայ կուսակցութիւնները, և այսքանն բաւ է արդէն զգայախարութեան վարակուած նկատելու՝ այդ տեսակցողներու հետ պընդիները:

ԸՆԾՅԵԼՈՒԹՅՈՒՆ

Մուսթաֆա Բէմալ կ'ըսէր իր Թանկերը միշտ միեւնոյնն է, այսքան փորձանքներէ յետոյ զեռ կը յամառի նոյնն մնալ, միեւնոյն ուղիներով գլուխներ, որոնք կուզան կ'անցնին, սակայն ուղիղի տրամագիծը, կշիռը, չափը, խորհելու և դատելու կարողութիւնն միշտ նոյնն կը մնան:

«Հայերը, կ'ըսէ, Մուսթաֆա Բէմալ, կ'զղան որ տեղահանութեան պատճառ երող ասպատակութիւնը առաջ բերած են», կ'ըսէք, հայերն ասպատակութիւն ընելուն համար տեղահան եղեր են...»

Ինչպէս ժամանակին իթիկատ, նըմանապէս այժմ կ'սպասեմ որ Մուսթաֆա Բէմալ հատոր մը հրատարակէ և անոր մէջ կարգ մըն ալ լուսանկարներ գեծողէ, ըստ իր գանգատին կովկասեան սահմանազուլներու վերայ իսլամներու կրած հալածանքները պատկերացնող...»

Որովհետեւ՝ Մուսթաֆա Բէմալ, Հայոց վայելած գուրգուրանքը, հոգածութիւնը նկարագրելէ յետոյ իր տիրապետութեան տակ գանգատ սահմաններուն մէջ, գանգատ կ'յայտնէ կովկասի իսլամներուն կրած հալածանքներուն համար, Հայոց կողմէ...»

Եւ ինք կ'երեւի այնքան կ'զուրկուրայ, այնքան հոգածու կ'գտնուի հայոց, որ չուզեր անհանգիստ ըլլան և իւր սահմաններէն անդին գաղթելով, փորձանքներու հանդիպին, և այս պատճառաւ աջալուրջ կ'սկսէ, որպէսզի այդ տեսակ սխալ քայլ մը չառնեն...»

Եւ որպէսզի ամէն բան կատարեալ ըլլայ, անշուշտ պիտի հրատարակէ հատոր մը վերեւ յիշատակածիս նըման, որպէսզի ամբողջ քաղաքակիրթ աշխարհն տեղեկանայ հայ հանրապետութեան սահմաններուն վրայ թուրքերու կրած հալածանքն ու տառապանքը:

Անշուշտ՝ Մուսթաֆա Բէմալ, չպիտի մոռնայ գանկեր ու գիական շարեւելու իրարու վրայ, եթէ միջոց չունի իթիկասի նման այդքան քրիստոնեայի զիականներ ու գանկեր մէկտեղելու, հոգ չէ, այդ վաղեմի գրքին քլիշէներն անշուշտ կ'մնան, կրնայ նոյններն գործածել և քաղաքակիրթ աշխարհն ինչպէս առաջինին՝ նմանապէս ալ այս երկրորդ իր կողմէ տպագրուած՝ կը հաւատայ:

Չմոռնար անշուշտ տիւնամիթի և պայթեցիկներու լուսանկարներն ևս, ասկից զատ իսլամ կիներ ու տղաքներ, որ սուրբներով կ'առաջնորդուին հայ... զորքերէ գէպի սպանդանոց մորթուելու համար, այս ալ գիւրիւն է, կրնայ նոր քլիշէներ պատրաստել տալ և տարագրելու փոխառութիւն ընել շատ գիւրիւն է, եթէ վարպետ քլիշէներ պատրաստողի մը յանձնէ գործն, կամ լաւ պատկերահանի մը

ժօտ պատրաստել տայ նախ լուսանկարները...»

Եւ կրնայ վստահ ըլլալ, Մուսթաֆա Բէմալ, որ այդ գիրքն հրատարակելով, հայոց դատը կորուսած պիտի ըլլայ և ամբողջ աշխարհ պիտի համոզուի, այդ փաստերուն վրայ... Թէ՛ հայերն են այս շարեաց բոլոր պատճառը...»

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՑ ԶԱՍՏԱԶՆՈՒԹԻՒՆ ԳՈՅԱՅԱՄ

Յաջող լուրեր կը հասին Երեւանէն վերջապէս ամեն մարդ կ'ըմբռնէ թէ՛ երկիրը չի կրնար այդ մինսգրական մոլուցցիկուած ծայրայեղութեան տարուիլ, առանց վնասելու հայ ազգային դատին: Որքան շուտ, այնքան լաւ կ'ըլլայ խելամուղի և բանականութեան գալ: Արդէն մինչև հիմա անյաջողութեան պատճառը Հայերու բաժանումներն էին, յառաջ եկած մէկ կողմէն Դաշնակցութեան կամայական գործունէութեանն մ'աւ կողմէ ալ ընդդիմադիր տարրերու գաղտնաբերութիւնն անհոգութեանն: Կը լսենք որ, Երեւանի կառավարութեան հետ բանակցելու համար զրկուած Պ. Պ. Թէքեան և Տէր Ստեփանեան յաջողած են համոզել նաև Պ. Սամսոն Յարութիւնեանը, և ստացուած հեռագիրը այնպէս ցոյց կուտայ թէ, բանակցութիւնները լաւ ճամբու մտած են, և յոյս կայ որ մօտերս թէ՛ դահլիճի և թէ՛ ընդհանուր պաշտօնէութեան մէջ արմատական փոփոխութիւններ մտցուին: Հետագիրը նոյնիսկ կ'ըսէ թէ «Երկու թըրքահայ նախարար պատրաստ ունեցնել իրաւացի են ուրձմն վերջերս շրջած լուրերը: Հիմեր կան ընդունուելու թէ, Երեւանեան զահլիճը, իբր ամբողջական Հայաստանի առժամայ կառավարութիւն պիտի ձանչցուի հետեւեալ պայմաններու տակ. — 8 նախարար, որոշ փորթֆէօյլով պիտի ընտրուին, 4 Դաշնակցականներէ, 2 թրքահայերէ, 2 ուղղակի Պ. Նուպարէ, Զրդ նախարարը, այն է պատերազմականը Բուրջէն չէզոք պիտի ըլլայ, և բանակին խստօրէն արգիւտուած պիտի ըլլայ թագաքակտութեամբ գտաղիլ Ուրեմն Պ. Պ. Դրօն և Սեպուհը մեծապէս օգտակար կ'ըլլան, իրենց կարողութիւնը ի սպաս գնելով հայրենիքի արտաքին թշնամիներուն գէմ: Գալով նախարարապետին, այն է Պ. Պոզոս Նուպարի առ այժմ Բարիզ պիտի մնայ իր կողմէ ներկայացուցիչ նշանակելով մէկը: Ինք նախարարներն ընդ զատ 3 նախարարներ եւս պիտի գանձուին առանց փորթֆէօյլի, որոնք առ այժմ հոս՝ Բարիզ պիտի մնան: Ահա՛ այս կերպով յառաջ կուգայ լուծումը, որ կը գոհացնէ երկու կողմերն ալ, և հայկական միացեալ կա...»

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

15 Դեկտեմբեր 1919

ԵՐԵՍ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Օսմ. Խորհրդարանի հրեպոստանական ընտրութիւնները պիտի կատարուին յառաջիկայ Հինգշաբթի օր:

ԳՆՆԱԿԱՆ ՊՏՈՅՑ

Կարգ մը գործերու կարգադրութեան համար, Պօլիս ժամանող Խորհրդարանի քննիչ յանձնախումբը, Պանաղբատի եւ Պալլաքէսէրի մէջ ևս քննական պտոյտ մը բնելու համար մեկնած է պօլսէն:

ՓԷՑՁԻ ՓԱՀԱՅԻ ՏՆՂԵԿԱԳԻՐԸ

Ֆէյզի փաշայի յանձնախումբը որ քննական պտոյտէ մը կ'վերադառնայ Փոքր-Ասիոյէ իր տեղեկագիրը յանձնած է ներքին գործոց նախարարութեան:

ԹՈՒՐԿԻՈՅ ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ

Լօտոսնէ կ'տեղեկացնեն թէ՛ Ֆրանսայի վարչապետ Մ. Քլէմանսօ Լօտոսնէ վերադարձին Թուրքիոյ հաշտութեան հարցը ձեռք պիտի առնէ և ըստ թրքական աղբիւրէ հասած լուրերու Թուրքիոյ հարցին նպաստաւոր հաշտութիւն մը պիտի կնքուի:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

«Թայմզ» խմբագրական մը կ'ընտրէր Ռուսիոյ և Թուրքիոյ ներքին վիճակին վրայ և թուելէ յետոյ Ռուսիոյ արիւնի և անիշխանութեան մէջ զբառնուին, Թուրքիոյ մասին ևս ներքին խառնակութեան մէջ գտնուելը կ'զբէ և դառնալով Պօլսոյ ապագային, այդ մասին ևս որոշում մը տրուած չըլլալը կ'հաստատէ:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՎԻՃԱԿԸ

Հասած տեղեկութեանց համեմատ Գերմանիոյ ներքին կացութիւնն որոշորովին խառնակ վիճակի մը ենթարկուած է: Գերմանիա կ'պատրաստէ համաձայնական վերջնագրին պատասխանը, որու մասին թէև ստորագրուած չի մը չկայ, սակայն յուսարի է որ նպաստաւոր պիտի ըլլայ և Գերման արտաքին գործոց նախարարը ներքին այս վիճակին առաջ հրաժարական տուած է, սակայն վարչապետ Մ. Շայտէմանի պնդումին վրայ ետ առած է իր հրաժարականը:

ՖԻՆԻՍԻ ԽՆԴԻՐԸ

Մ. Նահանգներէ մօտերս կ'պատուի Ֆինլանդի խնդրոյ պատասխանը:

ԻՇԽԱՆ ՍԱՊԱՀԷՏՏԻՆ

Իշխան Սապահէտին որեւէ կառավարական պաշտօն մը չստանձնելու յայտարարած է: Եւ իր քաղաքական տեսութիւններն մամուլ միջոցաւ պարզել որոշած ըլլալը ծանուցած է:

ՊՈԼՍՈՅ ԽՍՂԱՐԱՆՆԵՐԸ

Համաձայնական ոստիկանութիւնը Պօլսոյ խաղարաններու փակումը որոշած է:

ԳԵՐՄԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ՄԸ

Վերջերս Գերմանիոյ և Համաձայնական պետութեանց միջև առկա ձեռքարկ խնդիրներու կարգադրութեան համար, Գերմանիա պիտի զրկէ Բաբիջ յանձնախումբ մը:

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Ուաշինկթընէ կը տեղեկացնեն թէ՛ հակառակ Մ. Ուիլսոնի հակառակ կործանումն, վերսային հաշտութեան դաշնագիրը ձեռնարկելու արտաքին գործոց յանձնախումբ միջոցաւ պիտի վաւերացնել տայ:

ԴԱՇՆԱԳՐԻՆ ԳՈՐԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հուստէ կը հետազոտեն որ նոյնիսկ եթէ Ամերիկա չվաւերէ վերսային հաշտութեան դաշնագիրը, համաձայնական եւրոպական պետութիւնք որոշած են զայն գործադրել: Սակայն նախապէս պիտի տեղեկացնեն Մ. Նահանգաց թէ իրենք գործադրութեան դրած են դաշնագիրը:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Անգլիական Խորհրդարանը ներկայ ամսոյն 23ին պիտի դադարեցնէ իր նիստերը, վերսկսելու համար յառաջիկայ Փետրվարի սկիզբները:

ՄՐ. ՀԻՉԳՕՔԻ ԿԱՐԾԻՔԸ

Ուաշինկթընէ կ'տեղեկացնեն թէ՛ թէև հանրապետական և Ռամկավար կուսակցութեանց միջև անհամաձայնութիւն կը տիրէ վերսային դաշնագրին ճշկատումը, բայց Մ. Հիչքօք այն հաւատարմութիւնն որ այդ երկու կուսակցութեանց միջև համեմատութիւն մը պիտի յաջողի տուալ բերել:

ԹՈՒՐԿԻՈՅ ՀԱՐՑԸ ԱՆԼՈՅԾ

«Ա. քսիօն Ֆրանսէզ» Թուրքիոյ հարցին առկա մնալն ամբողջ աշխարհի վնասակար կ'համարէ: Իսկ «Թոն» խօսելով Եւրոպիոյ վիճակին վրայ, անոր հետ սերտորէ կ'պատուած կ'նկատէ Թուրքիոյ խնդիրը:

յանէ: Վերջին 24 ժամուան ընթացքին Իզմիրի մէջ պատահած են ժամապարտի 5 զէպք (կրիւս մահացու): Ճաղիկի 8 զէպք (մին մահացու): Մաղնիտի, Գորտիլի, մէջ մէկական ծագրիկ: Վուրլարի մէջ ժամապարտ 1 զէպք:

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ ՕՐՈՂՏԻ ՊԱԳ ՎԱՃԱՌԱՏԱՆՑ

Օրողտի Պաք, տնտեսն Փրանսական ընկերութիւնը կը տեղեկացնէ իր յարգոյ յաճախորդներուն, որ իւր վաճառատունք այժմ փոխադրուած են Այա-Խորկի փողոց թիւ 70: Վաղու ընէ սկսեալ թէ մեծաքանակ և թէ փոքր քանակ վաճառուելու կը գտնուին ժողովրդեան տրամադրութեան ներքեւ:

Իրենց նախկին շէքին այրուելովը, այժմ նոր վաճառատանց մէջ զբառնուած ամբողջ ապրանքները, բարտրովին նոր ստացուած են Անգլիայէ, Ֆրանսայէ և այլն:

Պարզ այցելութիւն մը պիտի վաճառեն յարգոյ յաճախորդները, այն անմրցելի և քաղաքական աճանքին համար, որ իր վերաբացումին առթիւ սոյն հաստատութեան Տնօրէնութիւնը ուզած է գործադրել:

Քաղաքային, արեւոյս և պատժ, գետնաբազմաբանութեան, ինչպէս նաև ամեն լիզուէ պաշտօնակազմը խմբագրութեան և թարգմանութեան համար գիտել:

ՎԿԱՅԵԱԿ ՓԱՍՏԱԲԱՆ ԼԵՒՈՒՆ ԵՐԿԱՆԵՆԵԱՆԻ

Շիշէճիլէր, Բասաժ Անտաթսա, Բ. յարկ, էնվէր պէյի գրասենեակը Արտաք և խղճամիտ գործունէութիւն, չափաւոր վարձք:

ՕՐՓՍԱՆ ԿԱՉ ԳՕՎ. ԼՍՑ.

Ա Զ Գ

Իզմիրի օդային կազմ ընկերութիւնն պատիւ ունի ծանուցանել իր պատ. յաճախորդներուն որ ամէն օր ժ. 8-12 և կ. 2-5 (քացի կիրակի և չորեքշաբթի կեսօրէ վերջ) իր Բունթայի գործարաններուն մէջ կ'վաճառուի Լինեթի մաքրուած քօք, զերծ փոշիէ մէն մի օխտն 9 մէթալիկի զնով, Լինեթի քօքի փոշի 42 ամ 9րշ. քանթարը 44 օխտի և անգլիական հանքածուրէ պարաստուած քօք թօսն 75 օսկի:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՍՏԱՅԱՆ.Ք.— Միւսթիւն պաշտօնաթերթ Չ. Բ. Ը. Միութեան Յուլիս-Օգոստոս ամսաթիւը:

Հայաստան պաշտօնաթերթ Հայ Ազգ. Ազատական միութեան թ. 10, 11:

Կանթիկ Հայաստանի 8 և 15 նոյեմ. թիւերը:

Արաբո-չաքաթաթերթ օրկան Ազգ. Ազատական կուսակցութեան թիւ 46, դ. 7ուկէս զրշ:

Հայ Բէէէլ ամսաթերթ բժշկական և առողջապահական թ. 9-10 դին 10րշ:

Իրան-Էս պարբերաթերթ հայ երեսօտարոց իրաւագէտներու ակումբի թ. 3 դ. 10 զրշ:

Հայ Մասաթ օրկան Չ. Մ. Ը. Մ. կիսամետայ թիւ 3 դին 7ուկէս զրշ:

ՎՐԻՊԱԿ.— Որբացեալ Մարկոս Մամուրեանի քառասնեակին առթիւ եղած 5 օսկի նուիրատուութիւնն պէտք է կարգու Պ. և Տ. Օ. Մէթէրիսեան:

ՃՈՂՈՎՈՒՐԴԻ ՁԱՅՆԸ

Օր-Բերէլ քաղաքական և հասարակական խմբագրապետ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱԿՈՐԻԱՆՍԻ Տարեկան բաժնեկրն 700 զրշ:

որոյ պայքար, երկրորդ քուէարկութիւն Ատոնց արգիւնքն են, 38 ձայն՝ վերապահութեամբ միասին վաւերացածն համար, 53 ձայն՝ ընդդէմ:

Մերակոյտը չէր ընդունած: Բայց այս անգամ Լօճի հանրապետական խումբերը տակը կը մնային Այն տնտես Ամերիկայի այս Բարձր Ժողովը դարձած էր:

Ինչ անցած են այս վերջին օրերու նախ նախապահը կը մնայ միշտ նոյն վիճակին մէջ: Ան ոչ իր նախկին ֆիզիքական ուժը գտած է և ոչ ալ բարոյական կորովը:

Յետոյ դաշնագիրը մահամերձ է: Երկու շաբաթէ ի վեր կը փորձին զայն ազատել, ըլլայ բանակցելով Մ. Լօճի հետ խորոնցմէ մի քանին ետ առնէ ըլլայ Համաձայնականութեան հետ, որպէս զի զանոնք ընդունին ամբողջովին Բայց Մր. Լօճ պլոքի մը կը պատկանի, իսկ դաշնակցները առանձին կառավարութիւններ են: Յարգ Մ. Լօճ կ'մերժէ որեւէ իրաւախոնութիւն: Ինչպէս զի իրաւախոնութիւն չունի: Գիշերահանգիցները սարկուտանիքներ են, թէ հանրապետական վերապահութեանը աւելի կայուն և աւելի աւելան պիտի ըլլան թէ Ուիլսոնեան դաղափարաբանութիւն:

Մր. Լօճ Նոյ. 19ի իր յաղթութեան իրիկունը ազադակած է թէ ան «մեացուցած է Մ. Ուիլսոնի դաշնագիրը»: Մ. Լօճ շատ շըջնայեաց պետական մարզ մըն է և գիտէ թէ երբ որ իր երկրին դերադրոյ պետին կողմէ հրաշակուած դաշնագիր մը կը մեղացնէ, կը մեղացնէ նաև 50 կամ 100 տարւան համար, բոլոր այն դաշնագրերն էրը, որոնք պիտի հաշտուին իրեն յաջորդող պետներուն կողմէ: (Մ-Բէ) ՍՏԷՑԱՆ ԼՈՉԱՆ:

Ազգային Անցուկայի

Առաջնորդարանէն կը տեղեկացնեն մեզ:

Ատանաէն քաղաքս ծամանած է Գրեգորի Մ. Վ. Պարաքեան Պարաքեան Մ. Վրդպ. կիլիկիա մեկնած էր անդւոյն վրայ մասնաւոր քննութիւններ բնելու համար: Արդ քննութեանց առթիւ այցելած է Միւսթին, Թարաս Ատանա, Պաղլէ, Իսմայիլի, և այլն: Առջնորդական տեղապահ հօր ընկերակցութեամբ այցելած է Մարտիան, Պաքրճեան վարժարանները, Կերտնական և Ազգայնց որբանոցները, Ազգ. հիւանդանոցը, և մեծ գոհունակութիւն յայտնած է վերոյիշեալ շէնքերու վարչներուն, տիրող մաքրութեան, կարգապահութեան համար:

— Շաբաթ օր, Տեղապահ հօր այցելած է Փոքր—Ասիոյ պապական նախարակ և Իզմիրի կաթօլիկ Հասարակութեան այցելու հովիւ, Գեր. Բօթրիլի:

— Կիրակի օրուան Ընկերաբարոյցի ցերեկային նախազանութեան հրաւիրուած էր Առաջնորդ. տեղապահ Տ. Յովհան Մ. Վ. Կարապետեան:

Տեղական Լուրեր

ՉԻՆՏՐՈՒԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՆՈՅ Գիւտանին տեղեկագրին համեմատ, Ազգիլէի մօտ Այա-Սուլաթի վրայ կրակ ըրած է թըշնամի թնդանօթ մը: Թուրք ապրտամբներու խումբեր յառաջացած ըլլալով մինչև հելլէն յառաջապահները, հրետանիին կրակին ներքեւ տահանջած են:

Պայթեցրի մօտ, ապստամբներու խումբեր նոյնպէս յարձակած են հելլէն յառաջապահներու վրայ, ետ մըրդուած են հելլէն թնդանօթներուն կրակին տակ:

Պերկամաի մօտ 60ի չափ ապստամբներ զնդացիներով յարձակած են Չուսալի հելլէն զիւրքերուն վրայ և ցրուուած են թնդանօթի հարուածներուն ներքեւ:

ՀԱՆՐԱՅԻՆ առողջապահութեան տնօրէնութիւնն հետեւեալ կը ծանու-

ՎԵՐՋԱՊԷՍ

Հասան այնքան ասեմէ իջեր
անհամբերութեամբ սպասուած՝
սիեզերահոյակ **ՋԵՆՅՈՐ** ժա-
նայոցները:



Կը ԵՒԹՈՒՆՆԵՐ

ՎԱՅԱՆ ԶՄԻՌՆԱԿԷՍԵԱՆՆԻ

Վաճառատուներ ի Չուխա Պէտեւ-
րէն, թիւ 13 — 15:

Ընդհանուր ներկայացուցիչ
Իզմիրի, Գոնիայի, Պրուսայի,
Ասամաի նահանգներուն եւ Ար-
շակապատի կողմից:

Կը ծախսուի նաեւ արեւն
ու ծանագործներուն հոյ:

ՔԱՐՄՈՒԹՕ Գ. ԵԱԳՈՒԿԷԼ

ՅԱՆՏԷՎԻ ԽԱՆ 7

(Փէշտիմալըլար պաշը)

Անոնք որ կ'փոփոխեն Չամիչի
զուտ ոգի գործածել, անորատ մաքուր
ե. խնամով պատրաստուած, թող զի-
մեն վերեւի հասցէին, թէ մեծաքանակ
ե թէ փոքրաքանակ գնումներու հա-
մար,

Գինն Մէլ Մի Օնսու 50 Ղրն.

Անհատատուի կին մը, որովհետեւ
այս ըմպելիին արտածութեան համար
պատրաստուած է, բայց արտածել կա-
րելի չըլլալով տեղւոյ վրայ վաճառել
սրտչուած է այս ածան գնով:

ՊՕՂՈՍ ԿԱԿԱԶԵԱՆ

ՆՇԱՆԱԳԻՐ (ԱՆՍԷՆ)

Ա.Բ. Կեանք լիարժեք է Ենիքը

Զուտ ոգիներու լիարժեք է

Վաղածանօթ այս վարպետը տա-
րագրութենէ հասած քաղաքս գործի
սկսած է, թէ ճաշակաւոր ե թէ ա-
ծան գիներով գոհացնելու պատրաստ
յաճախողները Փոփոխողը զիմեն
Յուսուֆի բասած, Պ. Մաթիկեանի
տպարան: ուր կը գտնուի:

ՍՊԻՐՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Կրակի դեմ.
NATIONAL UNION SOCIETY LTD.
LONDON
CENTRAL INSURANCE CO. LTD.
LONDON
**Փոխադիւ.
PHOENIX ASSURANCE COMPANY LTD.**
LIVERPOOL
Դիմել նախաձեռնութեանց համար.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ
Լ.ԵՒ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ՎԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Թերթիս ծառայք արեւի ընդարձակուած ըլլալով, այժմ ի վի-
ճակի եւնի արեւի շայն տեղ մը տալ ծանուցանեց թաճակն, նոյնիսկ
եքէ արեւն որ հարկ ըլլայ միեւնոյն ծանուցումն կրկնել, ինչ որ
ասկից առաջ ի վիճակի չէինք ընելու:

Գոհացուցիչ պարտականեք փոքր կամ մեծ, մէկ կամ արեւի ծա-
նուցանեց համար:

Դիմումներ կ'ընդունուին անձեռնէ միջոցի կես գին:

ԿԱՆԻԿ ՎՃԱՐՈՒՄ

ՏՊԱՐԱՆ ԿԱՄԱՐՔԵԱՆ
ԷՐՄՆՈՐԱՅ 1883ԸՆ

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպագրուին գրքեր, գրքոյկներ, տետրակներ, յայտարարու-
թիւններ, հարսանեկան հրատարակումներ, զեկուցատուներու մատուցումներ են.

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին նամակագրութիւններ, պատրաստուած, հաշուեցուցակ-
ներ, ընկալագրեր, վերջապէս վաճառատան մը վերաբերեալ ամեն տեսակ
տպագրական գործեր:

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին տեղեկագրեր, երեկոյթներու նամակ-հրատար-
արքեր տոմարներ եւ վերջապէս տպագրական արեւստի վերաբերեալ ամեն
տեսակ գործեր:

Ամեն լեզուէ՝ շԱՅԵՐԷՆ, ՅԻՄԵՆԵՐԷՆ, ԱՆԳԼԻԵՐԷՆ, ՅՈՒՆԱՐԷՆ, ՔՈՒՐԴԵՐԷՆ

ՏԵՍԱԿՆԵՐՈՒ ՊԵՏՊԻՏՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԳՈՐԾՆԵՐՈՎ
Մաճուր եւ խնամեալ գործ օրուան գիներու վրայ
Տպարանս բաց է առաջէ միջոցի կես գինը
խնդրանքներու համար

ՎՃԱՐՄՈՒՆՔ ԿԱՆԻԿ

ԹԵՆՏՈՐՈՍ ԲՍԱԽՆՈՒՏԻՍ

ՋՐԱՐՈՒԹԱԿՆ ԶԱՅԱՏՈՒԹԻՒՆ
ԵՒ ԲԱՂՆԻՔՆԵՐ

Ջրարտաբերութիւնը մորթը կը մաք-
րէ, արտաշնչութիւնը կ'ընթացնէ
արեւան չըջանը կը փութացնէ եւ մարմ-
նոյն անդամալոյժ մասերուն ոյժ եւ
առողջութիւն կը պարգևէ:

Լողանք ծծմբային } Բիւսարիմի հմր.
» պարէզ } Բիւսարիմի հմր.

տաք ու պողտուրը կրնորու եւ այրերու
համար առողջութիւն է:

Աւելի զիւրութիւն եւ հանգստու-
թիւն ապու համար բաժնած ենք
կանանց բաժնը թիւ 19ի շէնքը
արանց » » 82 »

Հաստատութեանս բժիշկներն են՝
Տօքթ. Բէթրոս Բօլիքբաթիս եւ Տօքթ.
Սարգիս Կալթակճեան:

ԿԱՅԱԳՈՐԾ

ԹԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ
(Ս. Ստեփաննայի փակին մէջ)
Հիւսնութեան եւ կանաքաբուսեան
արհեստին վերաբերեալ ամեն տեսակ
գործեր վերջին կատարելութեամբ կը
շինէ: Կ'ստանանք ամեն տեսակ յան-
նառութիւններ:
Մաքուր եւ խնամեալ գործի
Գիները չափաւոր:

ՏԻԳՐԱՆ Ա. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
ԳԱՆՔ ՕՐՕՄԱՆԻ ԴԻՄԱԾ
ՎԱՅԱՐՅՈՒՆ ԿԱՄԱՐՔԵԱՆ
Հասած են եւ հետզհետէ կը
հասնին բուն Քրանս. կաշիներ
մեծաքանակ վաճառու
ՆՊԱՍՏԱՆՈՐ ԳԻՆԵՐ

Մ. Յ. ԲԱՐՔԻԿԵԱՆ (13)

ԼԵՆԱՐՏԱ

ՊԵՏՐՈՍՔԵՐՆԷ ՊԵՏՐՈՍՍՈՆ

ԱԱԿՕԹ.— Ընդհակառակը վերջն
էր, երբ ըսաւ թէ առաջին անգամ
ի՞նչ պիտի գար հոս, ինչքէ առաջ,
ըսաւ թէ իր պարտականութիւնն էր:
առաջին հարուածը գիտաբարու «Աս-
տուծոյ սիրոյն, մի ընեք, չե՛ս ճանչ-
նար զինք, կը ճղմէ քեզ», ըսի:

ԼԵՆԱՐՏԱ.— Ո՛հ, Ասկո՛թ:

ԱԱԿՕԹ.— Հետեւաբար այն ատենն
էր որ ըսաւ «Չէ՛, այն կինը որ այս-
պիսի աշխի մը մեծցուցեր է» ԼԵՆ.
ԼԵՆ. ո՛հ, հիմա կը տեսնեմ թէ զՄԱՆ-
ԼԻ դարձած ես:

ԼԵՆԱՐՏԱ.— Ամբողջ առտուն մը
տաղաղ էի եւ թիւրիմացութիւն մը
ունեցայ:

ԱԱԿՕԹ.— Ասկէ վերջ՝ ա՛յ մտահո-
գութիւններ պիտի չունենաւ Որով-
հետեւ մարդիկ շատ աղնիւ են, դիտես,
եւ կրկին անոնց մէջ ապրելու կ'եր-

թաւ: Դո՛ւն որ այնքան բարի եղած
ես...

ԼԵՆԱՐՏԱ.— Չէ՛, այդ ճիշտ իմ
չեղած բանս է:

ԱԱԿՕԹ.— Դո՛ւն. Դո՛ւն հասկնա-
լու մէջ է որ այնքան դժուարութիւն
կը կրես, մօրաքոյր: Ո՛հ, ի՞նչ ունիս,
սիրելի՛ս:

ԼԵՆԱՐՏԱ.— Դժբաղդ եմ, Ասկո՛թ:
ԱԱԿՕԹ.— Ինչո՞ւ մօրաքոյր: Ինձի՞
համար:

ԼԵՆԱՐՏԱ.— Դո՛ւն կեանքիս ա-
րեւն ես, դո՛ւն լոյս, շերտութիւն ու
փափկութիւն կը բերես անոր, սակայն՝
լոկ անոր համար է որ...:

ԱԱԿՕԹ.— Անո՞ր համար: Մօրու-
քոյր, չեմ հասկնար ըսածդ:

ԼԵՆԱՐՏԱ.— Կուշտ մէկն եմ, կարծ-
րասիրտ մըն եմ, կասկածոտ մըն եմ,
անողգամ վայրենի մըն եմ, ունեցա-
ծէս ոչ աւելի անձնագրութեամբ: Ի՞նչ
տեսակ երեւոյթ մը ձեռնու եմ իր աշ-
քերուն, եւ քուկիներուդ մէջ: Ըսէ՛:
Էնձի կոշտ ու տղեղ մէկը չե՞մ:

ԱԱԿՕԹ.— Դու քաղճաղոյն կրնն
ես ամբողջ աշխարհի վրայ: Միայն
քու աննուած գորութիւնդ, արիւն-
թիւնդ ու երիտասարդութիւնդ է որ...

ԼԵՆԱՐՏԱ.— Ո՛հ, ո՛չ, ճշմարտու-
թիւնը ըսէ ինձի: Արժանի չեմ այդ
բաններուն: Որովհետեւ գիտես, քու
սիրոյդ համար էր որ ուրիշ տարի լոկ

գործի մարդերուն ընկերացայ Ունե-
ցածիս բոլորը քուկը պիտի ըլլան:
Ուրեմն մի քիչ յարգանք ունեցիր ին-
ձի հանդէպ, Ասկո՛թ, ճշմարտութիւ-
նը ըսէ ինձի: Ես չե՞մ.— Ինչ պիտի
ըսէի: Ըսէ՛ ինչ որ եմ:

ԱԱԿՕԹ.— Պաշտելի՛:

ԼԵՆԱՐՏԱ.— Ո՛հ, ո՛չ, Ո՛չ մէկ
ատեն հիմալուան չափ գորտուր կեր-
պով ճանչցած չէի ամբողջ ուրիշ տարի
ճգնելուս արժանիքը: Արաւքին աշ-
խարհին մէջ տեղի ունեցած մեծ շար-
ժումներու մասին կարգացած բոլոր
գրքերս իրապէս լուսաւորած չէին
զիս: Ամբողջ կարգացածս ու խորհածս
կը գծուէին մարդերու եւ կրնորու ճըշ-
մարիտ աշխարհէն ինձի համոզ կեան-
քի առաջին նշոյլին քով: Քու նոր
հագուստներուդ մէջ նոր գեղեցկու-
թիւն միայն կը տեսնեմ, քու նորա-
ձեւի զլիսարկիդ, կրած գոյներուդ, ա-
նոնց զանգուելու կերպիւրուն մէջ:
Բան մը կը նշանակեն անոնք՝ որոնք
վրայ բան մը չեմ գիտեր: Հետո՞ք բու-
րում մը կը բերես, թարմութեան շունչ
մը, այնքան փափուկ ու կենսալից ես.
որ յայտեղի բոլոր բաները խիստ, կը
հիմնան կը ծանրանան ու կը խանգա-
րեն սեւ կը լուծուին, լսկ իմ կեանքս
ամէնէն աւելի խանգարուածն է:

ԱԱԿՕԹ.— Եւ, ուրեմն իր ըսածը
պատմելու եմ, քանի որ ըսածիս հա-
ւատալ չես ուզեր:

ԼԵՆԱՐՏԱ.— Իմ մասին բան մը
չե՞ք գիտեր միթէ:

ԱԱԿՕԹ.— Ո՛չ, անուղղակիօրէն
միայն ակնարկեց քեզի: Ըսաւ թէ ոչ
մէկը ուզած էր հասկնալ այնչափ որ-
չափ որ կուզէր քիչ հասկնալ, որով-
հետեւ զիս շատ տեսնելը՝ քեզ գտնե-
լու հասկնալ տուաւ իրեն, ա՛յդ էր
ճիշդ իր գործածած արտայայտութիւ-
նը: Եւ արտակարգ դիպուած մըն էր
որ...

ԼԵՆԱՐՏԱ.— Կեցի՛ր: Չեմ կրնար
անոր մասին մտածել հանդերձի
Խորհիլ թէ ան ճիշդ մեր... մեր...

ԱԱԿՕԹ.— Այնքան ատած մարդն
է, այո՛, տարրիկակ չե՞մ:

ԼԵՆԱՐՏԱ.— Ինչքէ բաժնուելուդ
առաջին անգամուն իսկ:

ԱԱԿՕԹ.— Այո՛:

ԼԵՆԱՐՏԱ.— Եւ անոր համար
հաշտութեան ու գուրգուրանքի լու-
սագրակով մըն է որ կուգաս:

ԱԱԿՕԹ.— Սակայն անոր համար
ո՛վ էր պատասխանատուն, կուզէի
գիտնալ: Եւ կ'ըլլես քու այստեղի
կեանքիդ համար կ'ըսես թէ կոշտ ու
ապեղ ըրաւ քեզ... քեզ՝ որ կրնայ ին-
ձի պէս յաղթութեան աստուածուհի
մը կերտել:

(Շարունակել)